ՆՈՐ-ԴԱՐ

№ 123 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 25 Յուլիսի 1885 Հինգշաբթի 25 Յուլիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 123

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երի քամիսը՝ 3 ր. 50 կ. Հասով 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուրբաթ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., ընկալեալների համար՝ կրկնապատիկ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են — 6 ր.

Յայտնիների փոփոխութեան համար վճարում են երեք հատ երեք կոպեկանոց մարկա։

Թերթը ամսանոցում ստացող բաժանորդները վճարում են 80 կոպ.

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատանը, քաղաքի կենդրոնում, պօստատան եւ-ը, Տրոյիցկի փողոցում Սամբա եկեղեցու հանդէպ։

ՆԱԽԹԻ ՊԱՀԵՍՏ

ԵԻԼԱԽՈՒՄ

Պատիւ ունինք յայտնել յարգոյ հասարակութեան, որ մենք Բագու-Թիֆլիսեան երկաթուղւոյ Եւրոպական Հայաստանում շինել ենք ՆԱԻԹԻ ՄԵԾ ԱԻԱԶԱՆ (резервуаръ), ուր մշտապէս պատրաստի ունինք ամենալաւ նաւթի մեծ քանակութիւն, որից և անմիջապէս մատակարարում ենք ցանկացողներին, ինչ քաղաքում կամ գիւղում որ կամենան նրանք։ Ուրիշների համեմատութեամբ վաճառումը մեզ մօտ լինում է ամենաչափաւոր գներով։

Ցանկացողները դիմում են այս հասցէով. «ՆԵՐՍԷՍ ՄԵԼԻՔ-ՓՇԱՅԵԱՆ և ԸՆԿ. ԵԻԼԱԽՈՒՄ», «Нерсесъ Меликъ-Пашаянцъ и К-о На ст. Евлахъ»։

6—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Տէր-Շմաւոնեանի և ընկ. գործի առթիւ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Ադուռնի։
Քաղաքական.—Անգլիա։ Թիւրքիա։ Զանզիբար։ Լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Մահմեդի կեանքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՀՄԵԴԻ ԿԵՆԴՐԸ

Վաշինգտոն Իրվինգ

Լ.

Մահմեդ հեռաւոր արշաւանքի է ուղարկում իւր զօրավարներին։—Կուսակալներ է կարգում երջանիկ Աբուբեքր վերայ։—Առաքում է Ալիին այդ երիրում ծագած ապստամբութիւնը խաղաղելու համար։—Մահմեդի մահկանացուն։ Իրահիմի մահը։—Մահմեդ իւր որդու անհոգին և դերեզմանի մօտ։—Նրա արկածութիւնը։—Նրա վերջին ուղղորդութիւնը դէպի Մեկկա։ Նրա վարմունքն և քարոզը Մեկկայի մէջ։

Հաւատալու կամ հպատակելու անյօժար հեթանոսների դէմ սաստիկ մարտ քարոզող սուրբայի ծանուցման հետևանքն այն եղաւ, որ բազմաթիւ մարդիկ խմբովին սկսան հաւատ ընդունել և տուրք վճարել։ Իսկ հեռաւոր ցեղերն և իշխաններն այնքան դեսպանները առաքեցին Մահմեդին, որ նրանց անցնուդարձը Մեդինայի դաշտերից մի ամբողջ ամիս տևեց։ Մարգարէի ժամանակակիցը իշխանութեան տակ մտնողներից մինն էր և Իրակի կայսրը փոխանորդն Ասորւոց երկրում և Ամոնացւոց հին Ամօն քաղաքի կառավարիչն, Յարվա. սակայն կայսրը չընդունեց նրա հպատակութիւնը Մահմեդին և բանտարկութեամբ պատժեց նրան։

Մահմեդ ևս քան զևս Թագաւոր էր գառնում մարերով և գործերով. բայց այժմ էլ նրա յանդուգն աշխարհակալութեան խորհուրդները կրօնական եռանդից էին ներշնչվում։ Նա առաքում էր իւր զօրապետներին այնպիսի հեռաւոր երկիրներ, ուր տակաւին երբէք չէին արշաւել արաբացիք, և միշտ այն նպատակով, որ նրանք խորտակեն կուռքերն և նուաճեն հեթանոս ազգերին. և այսպէս կրօնի տարածման հետ տարածվում էր և նրա աշխարհական իշխանութիւնը։ Նա երկու կուսակալ էր կարգել երջանիկ Աբարիայի վերայ՝ իւր անուամբ այդ երկիրը կառավարելու. բայց երբ այդ արգաւանդ և նշանաւոր աշխարհի մի մասը ապստամբեց, Ալին ուղարկեց այնտեղ երեք հարիւր այրուձիով, որպէս զի նա խաղաղութիւն հաստատէ հետեւալ բնակիչների մէջ։

Այս յանձնարարութիւնն ընդունելիս երիտասարդ Ալին իրաւամբ տարակոյս յայտնեց, թէ ինչպէս կատարէր իւր պարտքն և ինչպէս վարուէր այն մարդկանց հետ, որոնք երեսից շատ աւագ կը լինէին հասակով, խելքով էլ գերազանց։ Մահմեդ դրաւ իւր մէկ աչքը նրա շրթունքի, իսկ միւսը՝ կուրծքի վերայ, և աչքերը դէպի երկինք ուղղելով, գոչեց. «ՈՎ Ալլահ, քանց սրա սրա լեզուն և ամբացուր սրա սիրտը»։—Եւ ապա տուաւ նրան մի կանոն, թէ ինչպէս պարտ էր վարուիլ երբև դատաւոր. „Երբ քեզնից դատաստան խնդրելու լինին, երբէք մի վճռիր գործը յօգուտ մէկին, քանի որ չես լսած միւսին“։—Այս ասելով մարգարէն յանձնեց նրան հաւատի դրօշակը, հագցրեց չալման և արձակեց իւր չուր։

Երբ առաջնէր քարոզիչը նիզէի հերձուածական նահանգը հասաւ՝ նրա սպանները, երանց հին սովորութիւնից մղելով, սկսան ասպատակել, հարկանել, կողոպտել և ամեն բան աւերման մատնել։ Ալին զսպեց նրանց աւազակութիւնները, յետ կոչեց վախատական բնակիչներին և սկիզբ արաւ վարդապետելու նրանց Իսլամի ուսմունքը։ Բայց նրա ճառերը, չը նայելով դեռ նոր էր թեւաթրուած մարգարէից, յաջողակ ազդեցութիւն չունեցան ժողովրդի վերայ—ունկնդիրք նետ և սլաքով պատասխանեցին նրան։ Այն ժամանակ Ալին ի գործ դրաւ համոզման հին միջոցը—սուրը, և այնպէս ազդու հերքումն տուաւ նրանց, որ անհաւատներից քան մարդիկ տեղն ու տեղը ջարդուեցան, իսկ մնացեալները երեսնց լիովին համոզուած յայտնեցին։ Բարեպաշտ ջերմեռանդութեան այս հանդիսից յետոյ, Ալին դարձեալ շատ նոյն տեսակ քաջագործութիւններ կատարեց, ամեն մի անգամ ջոկ հրեշտակները արձակելով դէպի մարգարէն, որպէս զի աւետեն նրան հաւատի նորանոր յաղթանակները։

Նոյն միջոցին, երբ Մահմեդ ամեն կողմից հասնող աւետարեր լուրերով ուրախանալու վերայ էր, նա մի սասպիլ հարուած ստացաւ իւր սրտի խորքում, մի ամենածանր ընտանեկան հարուած։ Նրա սիրած Մարիամ հարճից ծնեալ տասնհինգամեայ Իբրահիմ որդին, նրա միակ աւուր շառաւիղը, ոտով նա յոյս ունէր իւր անունը յաջորդ սերնդին աւանդել, մերձ ի մահ հիւանդացաւ և մեռաւ նրա աչքերի առաջև։ Խոր ծնողական արտմուտքեամբ համակուած, Մահմեդ սրտաբեկ և կորագլուխ կանգնած էր իւր յոյսերի այս վաղաժարչամ ծաղկի վերայ։ Սակայն և այս փորձութեան վշտալի ժամանակ նա ցոյց տուաւ իւր կրօնի հիմք կազմող հաւատիքը երկնային կամքին։ „Տնաւր է սիրոս, ասաց նա մեզմիւ, և արտասուքը սահում են աչքերիցս, քանի որ բաժանվում եմ քեզնից, որդեակ իմ։ Բայց իմ թախիծն աւելի զառն կլինէր, եթէ չը գիտենայի, որ ես էլ շուտով։ Մենք ամենքս Աստծուց ենք. Նրանից ենք եկել, Նրա մօտ էլ կ'երթանք»։

Տեսնելով մարգարէի արտասուքը, Արգալըահման ասաց նրան. «Մինէթ դու ինքդ չէիր, որ արգելեցիր մեզ արտասուք թափել մեռեալների վերայ“։—„Ոչ, պատասխանեց Մահմեդ. ես արգելած եմ ձեզ ազաղակել և ճչել, երես հարկանել և հանդերձ պատռտել. այս ամենը սատանայի ազդմունք են. իսկ արտասուքը տրտմութեան մէջ նոյն են սրտի համար, ինչ որ բալասանը վերքին։ Նրանք երկնային ողորմութեան պարգև են“։

Նա յուզարկեց իւր որդուն մինչև գերեզման, և այնտեղ ևս հրաժարման դառնակսկիծ րոպէին դարձեալ վկայեց, որ իւր կրօնի հիմունքն երբէք չէին փախչում նրա յիշողութիւնից։ «Որդեակ իմ, որդեակ իմ,—բացականչեց նա, երբ դերեզման էին գնում երեխային,—աստ. Աստուած է իմ տէրը, Աստուծոյ մարգարէն է իմ հայրը, Իսլամն է իմ հաւատը»։—Այսպէս էր պատրաստում նա իւր որդուն՝ պատասխան տալու այն հրեշտակներին, որոնք իսլամականների համոզմամբ քննելու են ննջեցեալների հաւատը գերեզմանի մէջ (*)։

Դէպ եղաւ նոյն ժամանակ, որ արեգակը խաւարեց, և աշակերտներից ոմանք Իբրահիմի մահուան պատճառով եղած երկնային սգոյ նշան համարեցին այս երևոյթը. բայց վշտահար հայրը մերժեց նրանց կոպիտ շողոքորթութիւնը։ «Արեգակն և լուսինը, ասաց նա, Ալլահի հրաշակերտները են, որոնցով նա մերթ ընդ մերթ իւր կամքն է յայտնում ծառաներին, և նրանց խաւարումը բնաւ կապ չունի մեր և մահկանացուի ծննդեան կամ վախճանի հետ»։

Իբրահիմի մահը Մահմեդի համար այնպիսի մի հարուած էր, որ արագ գերեզմանի մօտեցրեց նրան։ Նրա զօրութիւնն արդէն քայքայուած էր չափազանց ճգնութիւնից, հոգեկան յուզմունքներից և մարմնական դժուարին վաստակներից. իսկ Հայրաբեան Թոյնը ժամանակ առ ժամանակ ցաւագին խայթեր պատճառելով նրան, ապականել էր նրա մէջ կենդանութեան աղբիւրները և տուել էր նրան մի վազահաս ծերութիւն։ Մարմնական ցաւերի սաստկանալովը Մահմեդի բարեպաշտութեան եռանդն էլ բորբոքեցաւ,

(*) Իսլամականների մէջ Թաղման ծէսի ժամանակ մուլլան պարտ է յետագայ խօսքերն ասել մեռեալին, երբոր սա գերեզման դրուի. „Ո՜վ ծառայդ Ալլահի, ով որդիդ աղախնոյն Ալլահի, իմացիր որ այժմ երկու երկնային հրեշտակներ կիջնեն պատգամով քեզ և քեզ նմանների մօտ։ Երբ նրանք հարցնեն, Թէ ով է քո տէրը, պատասխանիր—Ալլահ է իմ տէրը։ Իսկ երբ հարցնեն մարգարէի, կամ այն մարդու մասին, որ առաքուած էր քեզ, պատասխանիր—Մահմեդ է Աստուծոյ առաքեալը։ Իսկ երբ հարցնեն, Թէ ո՞րն է հաւատդ, պատասխանիր—Իսլամն է իմ հաւատը։ Իսկ երբ հարցնեն Թէ ո՞րն է շինութեան գիրքդ, ասա—Կօրանն է իմ շինութեան գիրքն և իսլամականք ինձ եղբայր են։ Իսկ երբ հարցնեն կեցուածդ մասին, ասա—Քեարէն է իմ կեցուած. և կենդանութեան և մահուան մէջ դաւանում էի, Թէ չը կայ Աստուած բացի յԱստուծոյ, և Մահմեդ առաքեալն է յԱստուծոյ։ Այն ժամանակ նրանք կասեն. Հանգիր, ծառայդ յԱստուծոյ, ընդ հովանեաւ Աստուծոյ“։ (Տես. Lane, Modern Egyptians, vol: II. p. 338): Իրվինգ։

ՔՍԻՎՔՍԺՋ

Ս. Ս.

(Շարունակություն։—Նախընթաց համարներում)

Ինչպես ասացի, ես ոչ մի կերպ չէի կարող հասկանալ, թե ինչ պատճառով է Ալեքսանդրը ինձ հետ այդպես վարվում։ Ես ոչ մի վատ բան չէի արել նրա դեմ, ընդհակառակը, ես միշտ ջանում էի նրան հաճոյանալ, ամեն կերպ ուրախացնել նրան, ինչպես որ ինձ ասել էին։ Ես ոչ մի անգամ չէի համարձակվում նրա հետ վիճել, ինչպես որ անում էին ուրիշները։ Ես միշտ ուզում էի նրան ցույց տալ, որ ես նրան սիրում եմ, որ նա ինձ համար ամեն ինչ է։ Ես ամեն կերպ ջանում էի նրան հաճոյանալ, նրա ամեն ցանկությունը կատարել։ Ես ամեն առավոտ վաղ էի արթնանում, որ նրա համար սուրճ պատրաստեմ, ես միշտ նրա համար ամենալավ կերակուրներն էի պատրաստում, ես միշտ նրա համար ամենալավ ուտելիքներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ հագուստներն էի կարում։ Ես միշտ նրա համար ամենալավ գինիներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ ծխախոտներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ գրքերն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ նվերներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ զվարճանքներն էի կազմակերպում։ Ես միշտ նրա համար ամենալավ ընկերներն էի հրավիրում։ Ես միշտ նրա համար ամենալավ տեղերն էի ընտրում։ Ես միշտ նրա համար ամենալավ ժամանակն էի գտնում։ Ես միշտ նրա համար ամենալավ տրամադրությունն էի ստեղծում։ Ես միշտ նրա համար ամենալավ ամեն ինչն էի անում։

Ես չգիտեմ, թե ինչ էր պատճառը, որ Ալեքսանդրը ինձ հետ այդպես էր վարվում։ Գուցե նա ինձ չէր սիրում, գուցե ինձ ատում էր, գուցե ինձ արհամարհում էր, գուցե ինձ նախանձում էր, գուցե ինձ վախենում էր, գուցե ինձ չէր հասկանում, գուցե ինձ չէր ընդունում, գուցե ինձ չէր հարգում, գուցե ինձ չէր գնահատում, գուցե ինձ չէր ուզում, գուցե ինձ չէր կարիքում, գուցե ինձ չէր ցանկանում, գուցե ինձ չէր պաշտում, գուցե ինձ չէր երկրպագում, գուցե ինձ չէր ուզում, գուցե ինձ չէր կարիքում, գուցե ինձ չէր ցանկանում, գուցե ինձ չէր պաշտում, գուցե ինձ չէր երկրպագում։

Ես չգիտեմ, թե ինչ էր պատճառը, որ Ալեքսանդրը ինձ հետ այդպես էր վարվում։ Ես ոչ մի վատ բան չէի արել նրա դեմ, ընդհակառակը, ես միշտ ջանում էի նրան հաճոյանալ, նրա ամեն ցանկությունը կատարել։ Ես ամեն առավոտ վաղ էի արթնանում, որ նրա համար սուրճ պատրաստեմ, ես միշտ նրա համար ամենալավ կերակուրներն էի պատրաստում, ես միշտ նրա համար ամենալավ ուտելիքներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ հագուստներն էի կարում։ Ես միշտ նրա համար ամենալավ գինիներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ ծխախոտներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ գրքերն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ նվերներն էի գնում։ Ես միշտ նրա համար ամենալավ զվարճանքներն էի կազմակերպում։ Ես միշտ նրա համար ամենալավ ընկերներն էի հրավիրում։ Ես միշտ նրա համար ամենալավ տեղերն էի ընտրում։ Ես միշտ նրա համար ամենալավ ժամանակն էի գտնում։ Ես միշտ նրա համար ամենալավ տրամադրությունն էի ստեղծում։ Ես միշտ նրա համար ամենալավ ամեն ինչն էի ան

ենք համարում ասել Թէպէտ այ-ալուները (Հրացան) խոսիւ արգե-ուած են, այնուամենայնիւ սրանց էջ լիքն է։

Վիրաւորուածների մասին պատկա-աւոր դատաստանատեղերին բողոք է այտնուած է, որի մէջ յայտնուած է ա. սէր հօր վերայ Թուանք բռնելը· ուրքը անտարակոյս կը խափէր քահա-այն, եթէ իւր ազգականները այնա-ուն ձեռքերը չ՝ առնէին։ Երկու վի-աւորողները դեռ ամենայնէն պատ-ից ևս ազատ են։

Գործին Թուլումիւն է տիրում։

—

ՎԵՐԻՆ ԲԱՍԻՆՈՒՄ (Թիւրքիա) գըտ-ուած էլեէքթրէքից մեզ հաղորդում ն.—Յուլիսի 2-ին կէսօրից յետոյ 4 ժա-ին մի տեսակ կարկուտ հիւս, որի անրումիւնն մէկ ֆունտ (? խմբ.) էր։ եղիս հասած արտերը փչացած են. մի կող-եղէն գիւղացիք չուտրած են. մի կող-ից Թիւրք պաշտօնեաներից քաշած ելումիւններից, միւս կողմիցցրտից և արկտից։

—

ՕՐԹԱՂԱՒԱՑԻՑ.—Այս գիւղս Սուկա-էս լերան ստորոտումն է. բնակվում են միայն 10 տուն քրդեր, նրանք մեզ սում են Թէ օրերումս մի մշեցի սահ-անից անցնելիս Թիւրք պինուորները ցան են արձակում. խեղճ ազգերն դիպչում. պինուորները վեր են առ-ում նրան և տանում են Վաղարշա-եր (Աշակերտ) իրենց դատաւորին։

—

„Кавказъ“-ը լսել է, որ «Եփր Կա-ամի և ջուր. առաջարկած փոշը մտադիր է թվիատացիա անելու, այսինքն «խա-ուրը վակելու“։ Յանկալի էր, որ ինֆիլիսում դրա օրինակին հետևէին և ինները։

—

Շոգ օրեր են անընդհատ Թիֆլիսում. ատ անգամ ստուերի տակ ջերմա-ալը հասնում է 30 ոստիճանի։ Քա-աքիս մօտ ամառանոցներում, ինչպէս ոցորում և Ծղնկէմ գիւղում, ջրի նե-ումիւն են կրում. ջրերը ցամաքում ն։ Ծղնկէմում երկիւղ կայ, որ եթէ անձրևները գալու չ՝ լինին, գիւղը բո-որովին կը մնայ առանց ջրի։ Ամարա-ոց գնացողներից շատերը մտածում ն մեզ մօտ վերադառնալու։ Քա-աքումս Ճշմարիտ է ջուր կայ, բայց ին ջուր այդ է հարցը։

Այս տարի սովորականից դուրս այն-քան շոգ է քաղաքումս, որ բան չի-ել, աշխատելը անկարելի էլինում, մա-ւանդ ցերեկը։

—

ՇԱՄԱԽՈՒՑ.—Այստեղ կլուբը շատ ոարները յաւիտենական հանգիստ էր լայելում, մինչև որ վերջիններումս մի քանի բարեմիտ մարդիկների չնորհիւ նրա փակուած դռները վերստին բա-ուել են։ Կլուբի մէջ Թուղթ այնքան չեն խաղում, սկանդալները տեղի ունենում։ Երաժիշտների մի խումբ նուագում է մինչև առաւօտ և շարաթը մի անգամ պարահանդէս է։ Ամեն բան այդտեղ բարեկարգ է, և պարապ ժամանակ անցնելու համար մի-մեանց հետ համաձայն են, բայց և այնպէս մի քանի Թերութիւններ աչքի են ընկնում. ա) կլուբում մտնում են այցելուներից օձանք զէնքով, որ բո-լորովին աւելորդ է և ոչ մէկ տեղ ընդունուած չէ, չը գիտենք դա զարդ է Թէ սպառնանք. բ) Թէպէտև կլու-բի մշտական անգամների մեծամաս-նութիւնը հայեր են, բայց պարման-քով օտարը պէտք է նկատ է, որ ըն-Թերցարանը վայլում է հայ լրա-գիրների չգութիւնով, մինչդայն „Մե-ղուն“ է երևում, ասել է Թէ հայ լը-բագիրներից խռովել է կլուբը. գ) ըն-Թերցարանում երբեմն Թուղթ են խա-ղում, որով խանգարում են ընԹերցա-նութիւնը։

Այս երեք կէտերի վերայ հարկաւոր է, որ ուշադրութիւն դարձնէին։

—

ՆՈՑՆ ՏԵՂԻՑ.—Եթէ խօլերան մեր երկիրը մտնելու լինի, անտարակոյս այդ սարսափելի հիւրը ամենից լաւ մեզ մօտ կընդունուի, քան որում այս-տեղ մաքրութիւնը ինչ է—չը գիտեն, և գրա մասին հոգալը—չուայլութիւն է համարվում։ Այս տարի մեր գաւա-ում խոսի շատ պակասութիւն է, բայց հացաբոյսերի խոստ առատու-թիւն է, հունձը յաջող է։ Խաղողի այ-գիները տակաւին անվնաս են, այս տա-րի գինու առատութիւն կը լինի, եթէ մի որև է անսպասելի դէպքից չը վնա-սուի պատուղը։

Այստեղ Թաղական կռիւները վերջ չունեն, մուշտի և փայտի փոխարէն գործ են դնում դաշոյն, ատրճանակ, այնպէս։ Նահանգապետը աւազակնե-րին հալածող և ձերբակալող պ. Գէօգչայեանին իրրև խրախոյս շնորհից պրիստաւութեան պաշտօնը Ղարբիս-տանում։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԴՈՒԻՆ։—Ցունիս ամիսը իւր հետ բերեց կենդանութիւն մեր քաղաքին։ Սկսուեցաւ Թրքական Ոամազան տօ-նը։ Արգունը կարծես ստացաւ նոր կեանք. բարեպաշտ Թուրք ժողովուրդը (որը հասնում է կրօնամոլութեան) ա-մարնալին երկար, տօթ և անտանելի օրերը ծոմապահութեամբ անցկացնե-լով անհամբեր կերպով սպասում է ե-րեկոյեան ժամը 8-ին մոլլայի «Ալլահ-հէքպեր» ձայնին, որ սկսէ արդէն պատ-րաստած, համեղ կերակուրները ճա-շակելու և մգկիթում աղօթելու։ Հետա-քրքրական է և մեզանում ժամանակ ա-խորժելի է մեզանում, երբ գիշերուայ ժամը 10-ին մգկիթի ահագին բարձ-րութիւնից մոլլան քաղցրաձայն երգով հրաւիրում է Իսլամի որդոց իրենց բա-րեմաղթութիւնը մատուցանելու Արար-չին. և պէտք է տեսնել Թէ ինչպէս շտապում են Իսլամի պաւակները դէպի մգկիթ, Թէ ինչպէս չուտով իրենց ապ-տեստը կատարում են մգկիթի առջև գտնուած աղբիւրների մօտ և ինչպիսի երկիւղածութեամբ մտնում են ներս, իսկ աւելի հետաքրքրական է ներսը՝ մգկիթը լուսաւորվում է հարիւրաւոր գոյնզգոյն կանթեղներով, ժողովուրդը դասաւորվում է օրպէս զինուորական վարժեր և գիւղմանական լուռութիւնը պահպանում է, որտեղ կարելի է լսել ճանճի բզզոցը, եթէ գտնուի. լսվում է միմիայն լմամի ձայնը որ երգում է դօրանից և մնացեալները լսում են. Ծնրադրութեան ատեն այնպիսի մի դասաւորութիւն են պահում, որ զըժ-ուար Թէ այդպիսի կարգապահութեան կարելի լինի պատահել Թրքական զօ-րաց մէջ։

Դուրս գալով մգկիթից ամենքը ցըր-վում են իրենց տները և սրճարանն ի-րը և սկսում են իրենց ուրախութիւն-ները որ տևում է ամբողջ գիշեր, այն ժամանակամիջոցում՝ նրանք մի քանի անգամ ուտում են և ապա առաւօ-տեան արշալոյս տեսնելիս մտնում ան-կողին, այսպիսով գոնէ մէկ ամիս գի-շերները նկատվում է կենդանութիւն մեր քաղաքում և աւելի գովելին այն է, որ ոչ մի անկարգութիւն չէ պատա-հում։

Բայց յունիսի 16-ին մի ընդհանուր չարժմունք էր նկատվում բոլոր բնա-կիչների մէջ։ Արդունը պատրաստվում էր ընդունելու իւր մեծապատիւ հիւ-րին-Վովկասի կառավարչապետի օգնա-կանին, որին սպասում էին Արդահա-նից։ Տեղական կառավարութեան ներ-կայացուցիչը (Окружный начальникъ) Քութայիսի նահանգապետի օգնական Իշխան Էրիստովի հետ գիմաւորելին մինչ Արդահան, մեծապատիւ հիւրը այցելում էր նոր շինուած Ճանապարհ-ները նայելու. նա մտաւ Արդունին երե-կոյեան ժամը 8½ և մնաց առաւօտ գնաց Բաթումի ճոռոխի վերայով։

Երբ այս տողերը գրում էի Ախալցխայից ստացայ մի նամակ, որտեղ նամակագիրը իւր նիւթը չինել էր „Նոր-Դար“-ի առաւոտ-վաթէն. այս մասին խօսելիս նա իւր գրուածքը այսպէս էր սկսում։ «Մի բորոտ օչխար ամբողջ հոտը վարակում է. Մենք ախալցխացիքս որ դեռ „Նոր-Դար-ը“ չը ծնուած այնքան յարգանքով և սիրով կարդում էինք „Մեղուն“ էջերում մեծ. Ապանգաբեանցի յօդուածները, որի շնորհիւ „Մեղուն“ ստացաւ աւելի յարգանք — սա վաստէ, և „Նոր-Դար»-ի ծնունդից յետոյ էլ մինչև այսօր մեր սէրը ու յարգանքը օր է օր շատանում է»։

Յ ո ւ լ ա կ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ։—Կ.-Պօլսից ստացած հե-րագիրներին նայած, որոնք տպուած են „Koelniche Zeitung“ լրագրի մէջ, Սա-լիսբիւրին յայտնեց, Մուսսուրուս-վաշա-յի հետ ունեցած այցելութիւնների մէկ-կի ժամանակ, որ ներկայ բրիտանա-կան կառավարութիւնը կը հետևի Ե-գիպտոսում Դլադստոնի կաբինետի քա-ղաքականութեան։ Բացի սրանից մաք-կիզ Սալիսբիւրին խոստացաւ Եգիպտո-սից զօրքերն հանել, առանց ժամա-նակամիջոցը որոշելու, և աւելացրեց, որ Անգլիան ոչինչ նոր միջոցի չի ձեռ-նամուխ լինելու Եգիպտոսին վերաբեր-եալ, չը խորհրդակցած առաջուց միւս պետութիւնների հետ և գլխաւորապէս սուլթանի հետ։ Այս յայտնութիւնը, «Kölnische Zeitung» լրագրի ասու-թեամբ, շատ բարեյաջող տպաւորու-թիւն է գործել Կ.-Պօլսում։

„National Zeituug“ լրագրի ասու-թեամբ, օրերումս անգլիական ծովա-յին լորդ Դարտինգտոնին ներկայացել է Լօնդոնի Սիտի հարստագոյն վաճա-ռականներից բաղկացած մի պատգա-մաւորութիւն լորդ-մէր Ֆուլերի ա-ռաջնորդութեամբ, խնդրելով զօրե-ղացնել բրիտանական նաւատորմը։ Մինիստրին ուղղուած ճառում Հենրի-Չերբս աշխատում էր ապացուցանել, որ Անգլիայի և նրա գաղթականու-թիւնների ափերը անբաւականաչափ են պաշտպանուած։ Լօնդոնի վաճա-ռական դասը պատրաստականութիւն յայտնեց ամեն կերպ օգնելու կառավա-րութեան երկրի պաշտպանութեան նը-պատակով։ Լորդ Համիլտոնը շնորհա-կալութիւն յայտնեց, որ նա պատրաստ է նոր հարկեր վճարել նաւատորմը զո-րեղացնելու և աւելացրեց. „Պատգա-մաւորութեան, անկասկած, յայտնի է, որ այս տարուայ ծովային բիւջէտը նախկին տարուանից 2 միլիոն ֆունտ ստերլինգով աւելի է, բայց նա մէջից է տալիս այնքան զօրեղացնելու մեր նաւա-տորմը, որքան պահանջում է այդ կառա-վարութեան ծովային քաղաքականու-թիւնը. բայց կասեմ և այս, որ ես հմուտ անձնքներին յանձնել եմ քննելու Թէ մեր ծովային ոյժերը բաւական են ար-դեօք։ Պաղթականութիւնների պաշտ-պանութեան նախագիծերը կը քննուին կառավարութիւնից։ Մեծ Թնդանօթ-ները, ականաձիգ նաւերի և ականնե-րի Թիւը կը մեծացնուի, այլ և կը շտա-պացնուի ներկայումս կառուցանուող նա-ւերի շինութիւնը»։

—

ԹԻՒՐՔԻԱ։—Տրիպօլիսից հեռագրա-կան «Rossegne» լրագրին գրում են, որ Թիւրքիան խոստ հոգ է տանում այս երկրի ամրութեան վերայ, ըստ որում վախենում է, որ մօտիկ ապա-գայում այս երկիրը այս կամ այն պե-տութեան յարձակումի առարկայ կը դառնայ։ Կ.-Պօլսից այն տեղ ուղար-կում են զօրեղ նաւատորմ զօրքերով։ Ինչպէս ասում են, օսմանեան կառա-վարութիւնը մտադիր է Տրիպօլիսի քա-ղաքապահ զօրքը մեծացնելու մինչև 60,000-ի։

—

ՋԱՆՋԻԲԱՐ։ — Դերմանական գաղ-թականական ընկերութեան գործակա-լութիւնից ստացած վերջին տեղեկու-թիւնները Ափրիկայի արևմտեան ափե-րից, ստիպում են կարծելու, որ մօտիկ ապագայում մի նշանաւոր կռիւ պիտի ծագի Գերմանիայի և Զանզիբարի սուլթանի մէջ։ Ինչպէս երևում է, Սա-ղոյ Բարգալը իւր զօրքերի մի մասը ու-ղարկել է գերմանական հպատակնե-րից քնակած հողի վերայ, որտեղ նը-բանք դիմադրութեան հանդիպեցան վերջիններից։

—

„Politischer Correspondenz“ լրագրին գրում են Պետերբուրգից.—Քաղաքա-կան, կառավարական, զինուորական հասարակական կեանքի բոլոր շրջան-ներում տիրապետում է խորին լռու-թիւն։ Մանաւանդ առևտրական և արդիւնահանական շրջաններում լըս-վում են գործերի կատարեալ դադար-ման գանգատներ։ Վաճառականու-թեան և արդիւնահանութեան դադա-րումն կարելի է մեկնել գլխաւորապէս այն ցաւալի իրողութիւններով, որոնք տեղի ունեցան անգլո-ռուսական հար-ցի լուծման միջոցին։ Լորդ Սալիսբիւ-րիի վերջին ճառը վատ տպաւորութիւն գործեց Պետերբուրգի քաղաքական շրջանների վերայ։ Նա նորից համոզեց ռուսաց կառավարութիւնը և վերոյ-յիշեալ շրջանները, որ Ռուսիան չի կարող հաւատ ընծայել դէպի նոր անգլիական կաբինետը և Թէ վերջինը մինչև անգամ այս դիպուածում, եթէ բանակցութիւնները գոհացուցիչ հե-տևանք կունենան, կը նայէ սրա վերայ, իրրև ժամանակաւոր համաձայնու-թեան վերայ, որը Թոյլ է տալիս գաղտնի շարունակել իւր Թշնամական գործողութիւնները ինչպես կեդրոնա-կան Ասիայում, այնպէս էլ Եւրոպայում։ Ռուսական մամուլը նմանապէս մի քանի ժամանակից սկսած մերթ ընդ մերթ կասկածները է արտայայտում լորդ Սա-լիսբիւրի կաբինետի մասին։

Անգլիայի և Գերմանիայի մօտա-ւորութեան գիտաւորութիւնները ի նը-կատի առնելով, Աննամի վերջին անց-քերը մեծ բաւականութեամբ ընդու-նեցան ռուս հասարակութիւնից։ Ռու-սիայում այն կարծիք ունին, որ եթէ Ֆրանսիան օգուտ քաղելով Հանգա-մանքներից կը հաստատուի Հնդկա-Չի-նաստանում, այս պետութեան հարևա-նութիւնը Հնդկաստանի հետ, որը այն ժամանակ երկու կրակի մէջ կը լինի դրուած, Անգլիային զգոյշ կը դարձնի և կը Թուլացնէ նրա Թշնամութիւնը դէպի Ռուսիան։

Ռուս մամուլը մեծ հետաքրքրու-թեամբ հետևում է մակեդոնական շարժումներին և կարծես Թէ, ցանկա-նում է գլուխ բերել մի յայտնի գոր-ծակցութիւն յօգուտ Մակեդոնեայի ազգարնակութեան։ Լրագրները տը-պում են տագնապալից տեղեկութիւն-ներ այս նահանգից և պահանջում են, որ Մակեդոնիայում փոխուի իրերի վի-ճակը, որը ստեղծուած է Բերլինի դաշ-նագրութեամբ։

—

„Kölnische Zeitung“ լրագիրը, որը իւր յօգուտածներով երբեմն իշխան Բիս-մարկի հայեացքների տարածողն է հանդիսանում, նկատում է, որ այժմուս աւելի քիչ բարեյաջող է ռուսների հա-մար Հերատի վերայ յարձակուելը, քան մի քանի ամիս առաջ էր։ Լրագի-րը անհականալի է համարում ենչուս Ռուսիան, եթէ նա իրաւ մտադիր էր այս քաղաքին տիրել, յետաձգում էր սրա իրագործումն։ «Գարնանը, ասում է լրագիրը, ռուսները կարող էին գնալ Հերատ, ողջ Եւրոպայի համակրութիւն ունենալով։ Թէպէտև մենք հիմայ էլ այնպէս բարեկամաբար ենք վերաբեր-վում դէպի Ռուսիա, ինչպէս առաջ, բայց այն ընդդիմադրութիւնը, որը մենք ցոյց տուեցինք Գլադստոնի Անգլիային, չի վերանալու Սալիսբիւրիի և լորդ Չերչիլի Անգ-լիայի վերայ։ Ինչպէս Բերլինում, այն-պէս էլ ուրիշ տեղ, միջոցների ձեռ-նամուխ կը լինեն, որ նոր մինիստրու-թեան Հանապարհը փշերով չը լինի ծածկուած։ Այս պատճառով, աչքի ա-ռաջ ունենալով անցեալը, հիմք չը կայ ներկայիս վերայ նայելու չափա-զանց մռայլ աչքով»։

—

Ասխաբադից հաղորդում են „Daily News“-ին որ այդ քաղաքում տեղա-ւորուած է ներկայումս 4000 ռուսա-կան զօրք և 1000 էլ այրուձի։ Թիւրք-մեններին վհնամերկ են դարձրել. բա-ցի այդ նրանցից խլել են և ձիանները.

—

«Daily News»-ին Պետերբուրգի Թըղ-Թակիցը հաղորդում է, հիմնուելով կը-շիռ ունեցող աղբիւրի վերայ, հետևեալ Թուանշանները աւազանական զօրքի քանակութեան մասին, որը էմիրի կար-գագրութեամբ զանազան տեղերում հաւաքուած բանակ են կազմում։ Հե-րատում և այդ տեղից մինչև Գուր-եան՝ 10,000 զօրք. Չիւլֆիկարի շրջա-կայքում մօտ 11,000, հետը նշանաւոր Թուով ռմբաձիգ զօրք, Մայմենում—6000, Անդհոյում—8000, Կունդուսում—5000։ Մնացած զօրքերը գտնվում են Կաբուլում և Կանդահարում.

—

«Indépendance Belge» լրագրին Պե-տերբուրգից յուլիսի 8-ից հաղորդում են որ անգլիացիները ոչ միայն Կվեթլաբ-տում չինել են ածուխի պահեստ, այլ և չինել են ամրութիւններ։ Բացի սը-բանից, նրանք ստոջբեայ պարան ձգե-ցին Կվեթլաբտի և Անդրկիանգի կղզի ներից մէկի մէջ։ Պարան ձգելը ծովի մէջ չէին կարողացել նկատել երեք ռուսական մարտանաւ, որոնք առա-ջապահ դերք էին բռնել Կվեթլաբտի ջրերում։

—

Ինչպէս հաւատացնում է «Daily Te-legrapf», բրիտանական կառավարու-թիւնը շարունակում է անհանգստու-թեամբ նայել ռուսական զօրքերի կեդրոնացման վերայ Հերիրուդի ափե-րի մօտ։ Շատ գժուար է, ասում է լը-բագիրը, Ճիշտ որոշել այս զօրական օգնութիւնների քանակութիւնը, բայց մենք կարծում ենք, որ մեր կառա-վարութիւնը ստացել է տեղեկութիւն-ներ, որոնցից պէտք է եզրակացնել, որ այս զինուորական տեղաշարժումնե-րը չեն պատասխանում խաղաղ դրու-թեան պահանջներին։ Ներկայ անհան-գստութիւնը առաջանում է ոչ Թէ անգլիական և ռուսական կաբինետի բանակցութիւնների բարեկամական բը-նաւորութեան փոփոխութիւնից, ոչ Թէ այս կամ այն կողմի պահանջի պատ-Ճառով, այլ մեկնվում է բացառապէս ռուսական դիրքերի զօրեղացնելովը Չիւլֆիկարի մօտ, այլ և նմանապէս բոլոր այն դիրքերի զօրեղացնելովը, ո-րոնք ձգվում են մինչև Կասպից ծովը։

—

Կալկաթայից հեռագրում են „Ti-mes“-ին յուլիսի 7-ից, որ Անգլիայից և սահմանագիծ յանձնամարից այնտեղ ստացած հեռագրները հաղորդում են Թէ ռուսական զօրքերը բազմանում են Աւղանիայի սահմանագլխի վերայ շտապ ու դրամարժէքի իջումն պատ-Ճառելով։ Բայց մի փոքր յետոյ հա-սարակական կարծիքը հանդարտուե-ցաւ, ռուսների շարժումը միայն իրրև նախապաշտպանողական միջոց ընդու-նելով, որ անհրաժեշտ էր մինիստրու-

Թեան վոլոխսութեան պատճառով, այլ ոչ Թէ իբրև սպառնալիք։ Հերատի ամրացնելը չարունակվում է չոտ եռանդագին անգլիական սլանների հսկողութեան ներքոյ, որի համար և բրիտանական սահմանադիր յանձնախումբը բանակուեցաւ Տունիանում 17 մղոն հեռու Հերատից։ Ռուսները իւր կողմից ամրացնում են Պէնջէհ և այն տեղ նշանակել են նոր նահանգապետ Խոլտան սարիկներից։ Հնդկաստանում կարծում են, որ նոր բրիտանական կառավարութիւնը բացառապէս Հերատով չի զբաղուի, այլ իւր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ Կանդահարի և Հելմունդի վերայ"։

—

„Times" հաղորդում է, որ անցեալ շաբաթ, չորեքշաբթի օրը, Ռուսիայի և Անգլիայի յարաբերութիւնների լաւատես գրութեան և ռուսական զօրքերի շարժումների մասին լուր ստանալուն պէս Trogemorten Street-ի վերայ տարատեսիլ սարսափ տեղի ունեցաւ և դրամական դրամարժէքը նշանաւոր կերպով վայր ընկաւ։ Միւս օրը նրա մի փոքր լաւացաւ դրամարժէքը, բայց այնուամենայնիւ դրամարժէքի վայր ընկնելը չարունակվում է տևել։

—

„Daily News" լրագրի Պետերբուրգի Թղթակցի ասութեամբ, ռուսական կառավարութիւնը մտադիր է չը ճանաչել Անգլիայի իրաւունքները էմիրի անունով բանակցութիւններ անելու հիւսիսային աւղանական սահմանի մասին։ Թղթակցի ասութեամբ, եթէ Անգլիան իրաւունք է համարում միջամուտ լինել Ռուսիայի և Աւղանիայի բանակցութիւնների մէջ վերջինիս հիւսիսային սահմանին վերաբերեալ, այն ժամանակ և Ռուսիան իրաւունք ունի միջամուտ լինելու Աւղանիայի հարաւային սահմանահարցի մէջ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անձնասպանութիւնների տարափոխիկ ցաւը, „Новое Время" Թղթակցի ասելով, վերջին ժամանակ Օդեսսում սաստիկ տարածուել է։ Անձնասպանութիւն է գործում 17 տարեկան գիմնազիայի հրէայ աշակերտ, մի չափազանց շնորհալի և համակրելի պատանի, անյուսալի սիրոյ պատճառով դէպի քրիստոնեայ մի օրիորդ արիստոկրատ ընտանիքից. քոնքուռ գնդակահար է լինում պաստալեն մի պաշտօնեայ, ինչ որ պաշտօնական չնչին բաների համար, տարատիեալ յուսահատութեան մէջ և առանց մի կտոր հացի Թողնելով իւր պառաւ մօրը. վերջացնում է իւր բոլոր հաշիւները կեանքի հետ զինուորական մի գրագիր նիւթական պակասութեան պատճառով. մի ինչ որ ծերուկ, որին կեանքը գղուացրել է, չը գիտեմ ինչու, սննեակ է վարձում հիւրանոցում և ճակատին տալիս է ատրճանակը. հանգստութիւն է որոնում Սև ծովի ալիքների մէջ պաշտօնազուրկ մի ոստիկան (օկօլօդօչնի), որը, երևի, անկարող գտնուեցաւ կեանքի ծովի ալիքների հետ կռուելու... Մի՞ լսօսքով, անկարելի է, ինչպէս ասում է Թղթակիցը, անձնասպանութեան բոլոր փորձերը միառմի Թուել, որոնք չեն յաջողուել այս կամ այն պատճառով, բայց, որ տեղի են ունեցել վերջին ամսում։ Այս անձնասպանութեան փորձերն իսկապէս միևնոյն անձնասպանութիւնները են, ըստ որում վերկութիւնը մեծ մասամբ դրսից է գալիս, առանց անձնասպանի բարի կամքի մասնակցութեան։ Մարդը արդէն առաստաղից կապած Թոկի օղակը վզին ձգել էր, արդէն ոտքով դէն էր դրել աթոռը և 4—5 րոպէ էլ, որ մարդուս կեանքը կրճատուի, այդ րոպէին մտնում է սենեակը մի ուրիշ մարդ... և փրկվում է անձնասպանը, ուրեմն «այս Թուլն, այս վողոջ վերայ, այս մարդոց կարուեցաւ անձնասպանութեան փորձ» գրվում է։ Տառապեալ և տանջեալ երիտասարդ կինը մեծ քանակութեամբ Թոյն է ընդունում, բայց անկարող լինելով համբերել ստամոքսի սարսափելի ցաւերին, սկսում կոծել. այդ լսում են հարևանները... բժիշկների յետից, դեղավաճառանոց են վազում... կինը լսելացնում Թոյնին հակառակ դեղ և նա փրկուած է, իսկ պաշտօնապէս սա ճանաչվում է անձնասպանութեան փորձ... Մարդս ատրճանակը ուղղում է սրտին, բայց ձեռքը ցնցվում և գնդակը նստում կէս վերշոկ դէպի ձախ— սա էլ անձնասպանութեան փորձ է. որև է երիտասարդ յոյն լսում է լուցկիների Թորմքը և իւր փորոտիքներում մահը ներս մտնելով գնում է զբօսնելու, բայց տեսնելով, որ ընդունած քանակութիւնը չէ ներգործում այնպէս շուտ, ինչպէս ինքն էր ցանկանում, վերադառնում է տուն. ազգականները հասկանում են նրա դրութիւնը... և փրկում են—դարձեալ փորձ է կոչվում սա։ Անձնասպանութեան փորձերի մասին այստեղ ամէն օր է լսվում, իսկ շատ անգամ այգպիսի փորձեր մի քանի հատ են լինում։

***

Օրերումս „Manshiouhonse-ում կայացաւ յանձնաժողովի առաջին նիստը. յանձնաժողովը նիստ էր կազմել ստուգելու այն վիճաբերը, որոնց մասին հաղորդել էր «Pall-Mall Gazette» անմեղ օրիորդների առևտրի առթիւ Լօնդոնում։ Այս յանձնաժողովը, որը բաղկացած է, ինչպէս յայտնի է, կենտերբերի եպիսկոպոսից, Լօնդոնի եպիսկոպոսից, կարդինալ Մաննինգից, Սամուէլ Մոլէյից և մի-ւս անձինքներից, երեք ժամի չափ լսում էր „Pall-Mall Gazette" լրագրի խմբագիր միստեր Ստեդի բացատրութիւնները։ Երբ հարց ու փորձը վերջացաւ, պ. Ստեդը առաջարկեց յանձնախմբի անդամներին միասին գընալ կենդանի ապրանքի երկու կօմմիսիոներուհիների մօտ անձամբ համոզուելու լրագրի հաղորդած տեղեկութիւնների ճշտութեան մէջ, սակայն անդամներից ոչ մէկը չը համաձայնուեցաւ։ Այն ժամանակ գնաց այցելելու գաղտնի խորհրդի անդամը և գտաւ վերոյիշեալ երկու կնոջ մի սրբուն 14 տարեկան ազջկան տանելիս, որը նրանց ասելով, վաճառուած է լինում մի 60 տարեկան պարոնին և ամեն հարկաւոր վկայականներ իւր ձեռքումն։ Այս վկայականները ինչպէս և ծեր պարոնի նամակները կոմմիսիոներուհիներին ուղղուած յանձնուեցան "Monshion-house"-ում նստող յանձնաժողովի անդամներին։ Շատ բարձրադիր անձինք պահանջում են Թագաւորական քննական յանձնախումբ հաստատել երիտասարդ օրիորդների առուտուրը Լօնդոնում քննութեան ենթարկելու։

***

Բուդդայի տաճարը Վիեննայում։—Վիեննայում այնքան շատ ճապոնացիք են բնակվում, որ տեղական ճապոնական դեսպանութիւնը իւր կառավարութիւնից խնդրել է Թոյլ տալ Բուդդայի մի տաճար շինել։ Այդ տեսակ տաճարները արդէն կան Փարիզում և Լօնդոնում։ Վիեննայում Բուդդայի տաճար շինելու գաղափարը ծագեց երկու տարի առաջ բազմաթիւ ճապոնացիների մահուան առթիւ, որոնց մարմինները տաճարի բացակայութեան պատճառով, առանց պատշաճաւոր ծիսակատարութիւնների Թաղուեցան։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

22 յունիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր "Standard„ լրագրում լոյս տեսած տեղեկութիւնը ռուսների և աւղանցիների մէջ տեղի ունեցած կռուի մասին ճիշտ չէ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ. Տօնավաճառը կամաց է առաջ գնում։ Ամենքը գանգատվում են ծանծաղութեան և բեռների դժուար տեղափոխութեան վերայ։

ՎԵՐՆԻ. Այս գիշեր զգալի եղաւ խիստ և երկարատև երկրաշարժ, որը տարածուեց Վերնիից դէպի ամեն կողմ. Պիշպեկում տները վնասուած են. Սուկուլուկ և Բելովոդոկ քանդուած են, 54 մարդ սպանուած են և 64 մարդ էլ վիրաւորուած։

ԿԱՅԻՐ. Բերբերից և Կօրօսկոից եկած արաբները հաղորդում են, որ Օսման-Դիգման մեռել է։

ՓԱՐԻԶ. Լսվում է, որ Մարսէյլում պատահել են մահուան մի քանի դէպքեր ազիքների խօլերատեսակ բորբոքումից։

ՏՐԻԷՍՏ. Մարսէյլում խօլերա երևալուն պատճառով տեղական ծովային վարչութիւնները կարգադրեցին, որ միջերկրական ծովի ֆրանսիական նաւահանգիստներից, այլև Ալժիրիայից եկած ապրանքները ենթարկուէին տասօրեայ քննութեան։

23 յունիսի.

ՎԻԲՕՐԳ. Այսօր ժամի 2½-ին ժամանեցին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին և, այցելելով ուղղափառ և շվեդական եկեղեցիները և ռուսական գեմնազիան, գնացին Վիլմանստրանդ։ Քաղաքը ճոխ զարդարուած էր։ Նոցին Մեծութիւնների ծովը ելնելու միջոցին խմբերգական ընկերութիւնը կատարեց ռուսական և ֆիննական „հիմներ"։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երեկ Նորին Կայսերական Մեծութեան, Թագուհու Կայսրուհու անուանակոչութեան օրը Մեծ Պետերգոֆի արքունիքի եկեղեցում կատարուեցաւ մաղթանք, որից յետոյ շնորհաւորութիւններ արին Նորին Մեծութեան, իսկ յետոյ նախաճաշիկ էր պատրաստուած 190 անձանց համար։

Երեկ երեկոյեան 8 ժամին Թագաւոր Կայսը և Թագուհի Կայսրուհին, Թագաժառանգի, Դէորգ, Ալէքսի, Սերգի և Պավել Ալէքսանդրովիչների և Մեծ Իշխանուհի Եղիսաբեթ Ֆեոդօրովնայի և բազմաթիւ պալատականների ուղղակիութեամբ գնացին Կրօնշտադ, որտեղ նստաւ „Դմիտրի" նաւի վերայ և գնացին Ֆինլանդիա։ Նոցին Մեծութիւնները կայցելեն Վիբօրգ, Վիլմանդստրանդ և Հելսինգֆորս։ Ձանապարհորդութիւնը կը տևի մինչև յուլիսի 30-ը։ Լրատվում է, որ «Դմիտրի» նաւը, Հելսինգֆօրսի ծովային այցելութիւնից յետոյ, կերթայ Կոպենհագէն։

Ս. Սինօդի գլխաւոր պրօկուրորը վերադարձաւ Պետերբուրգ և ընդունեց իւր պաշտօնը։

ԲԵԼԳՐԱԴ. Ռումինիայի միտրոպօլիտը Բելգրադի արքեպիսկոպոս Թէոդոսին ընդունեց անկախ սերբական եկեղեցու գլուխ և յայտնեց, որ տիեզերական պատրիարքը ընդունել է րումինական եկեղեցու անկախութիւնը։

ԼՕՆԴՕՆ. Պատերազմական մինիստրը յայտնեց պատգամաւորների ժողովում, որ մտադրութիւն չը կայ շարունակել երկաթուղին մինչև Բերբեր և Թէ միջոցներին են ձեռնամուխ լինում Սուաքիմի քաղաքապահ զօրքի փոփոխութեան մասին։

ՍԻՄԼԱ. Մտախոհութեամբ քննվում է տեղական հնդկական զօրքի իրաքանչիւր զօրագնդի մեծացնելը երկու վաշտով և իւրաքանչիւր հեծելագունդը մէկ էսկադրոնով։ Ասում են, որ այս միջոցը չէ պայմանաւորվում անգլօռուսական տարաձայնութիւններով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Երէ՛կ ամսական դրամարժէքը։

23 յունիսի.

Լօնդօն $23^3/_4$, $23^{15}/_{16}$ և $23^{25}/_{32}$
Համբուրգ $202^3/_4$ $203^1/_4$ և $202^7/_8$
Փարիզ $251^1/_8$, $251^3/_4$ և $251^1/_4$
Պօլուիմպերիալ 8 ր. 32 կ. սակ.
Մաքս. կարոնները
(կուպոն) . 8 » 31 » »
Լրծաթ . . . 1 » 33 » »
Բօրսային դիս. $5^3/_4$ և $6^3/_4$
Պետակ. բանկի 5 տոմսեր.
1-ին շրջանի 99 ր. սակ.
2-րդ » . $97^3/_4$ ր. սակ.
3-րդ » . 97 ր. 62 կ. գն.
4-րդ » . $97^1/_4$ ր. »
5-րդ » . . 97 ր. 37 կ. »
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի. $95^1/_2$ ր. սակ.
2-րդ » . $95^3/_4$ ր. » » »
3-րդ » . $95^3/_4$ ր. » » » »
Տար. գում. 1-ին փոխ. 5%
տոմսեր . . .218 ր. » » սակ.
» » 2-րդ $212^1/_2$ ր. » »
$5^1/_2$% րենտեր . 102 ր. » » »
Ոսկէ րենտը . 174 ր. » » »
Նոր կոնսոլ փոխ. 146 ր. » » »

24 յունիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Արտաքին գործոց մինիստրը այսօր արտասահման ուղևորուեց։

Պետական կապքերի մինիստրը մի քանի ժամանակով Պետերբուրգից հեռանալով, յուլիսի 22-ին յանձնեց մինիստրութեան պաշտօնավարութիւնը իւր ընկեր վեշնեակովին։

Կ. ՊՕԼԻՍ. Այստեղ հաւատացնում են, որ Անգլիան առաջարկութիւն է արել Իրան գրաւել Եգիպտոս, Նի նկատի առնելով Անգլիայի և Թիւրքիայի աւելի սերտ դաշնակցութիւնը միմեանց հետ և աւղանական սահմանահարցի խառն վիճակը։

ՓԱՐԻԶ. Սենատը ընդունեց պատգամաւորների ժողովից հաւանութիւն ստացած 12 միլիոն ֆրանկի փոխառութիւնը Մադագասկարի պատերազմական գործողութիւնների համար։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Eau de cologne des tuileries
De RIGAUD et C-o
Rue Vivienne, 8, PARIS
Ո ՏԸ ԿՕԼՕՑՆ ՏԷ ԹԻՒԻԼԻՐԻ
Ռիգօ և ընկերութեան
Վիվիէն փողոց № 8
Փ Ա Ր Ի Զ

Տարաշխարհիկ և հազուագիւտ նուշահոտ ծաղիկներով պատրաստած այս Օ տը Կօլօյնը ամենափափկասուն կանանց և օրիորդական գործածածն է այսօր։ Տը, քաղցրաբոյր, ախորժելի հոտական հոտ մը ունի, այս պատճառաւ է որ փափկամորթ և նրբագեղ կանայք և օրիորդք գործածում նրան Թէ դաչկինակի վրայ և Թէ լուացուելու համար։ Ծախվում է Տփղիսս Կովկասեան դեղագործական ընկերութեան կից դրօնատեղին։

(տե. 3) 9-

Մի քանի նորաւարտ աշակերտներ ցանկանում են իրենց դասերը նենալ Հայոց Լեզուից։ Ցանկացողները կարող են այդ անձանց հետ իմանալ Պ. Կոնստանդ Մարտիրոսեանցից, պ. 3. Մարտիրոսեանցի տպարանում։

6—1

Լույս տեսաւ
Ֆ. ՇՄԻԴԹԻ
Բենիամին Ֆրանկլին.
Երկրորդ տիպ.
Թարգ. գերմ. Վարդանեան.
Գինն է 40 կօպ.

Մամուլի տակն են Ֆ. Շմիդթի Գէօրգ Վաշինգտոն, գերմ. Թարգ. Փ. Վ. Երկրորդ տիպ, 140 էջ։ Հռեթի Իչիհանը, արձակ պատմուած, գերմ. Թարգ. Փ. Վ. 340։

Լոյս տեսնելու համար նիւթական ձեռնտուութեան կարօտ է՝ Գրուբէի ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ նոր ժամանակից, գերմ. Թարգ. Փ. Վ. Մի հատոր, 600 էջ։

Անդրկովկասեան երկաթուղին
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԿՈՒԹԻՒՆԸ „ԹՈՒ
ԼԻՍԻ" ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.
Բաթում պատ. գնում է ժ. 8—35 րոպ.
Բաթումից » գալիս է » 10—25 »
Բագու . . . գնում է » 10—55 »
Բագուից » » . . . գալիս է » 8—» »
ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԻՋԻ
Թիֆլիսից պատ.—Ճանապ. գնաց. գ
Նում է . . . . . ժ. 3—15 »
Սուրամից գալիս է . » 8—24 »

Վլադիկաւկազեան պօստային
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԿՈՒԹԻՒՆԸ «ԹՈ
ԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.
Կառքերը, որոնք Ճանապարհին դէպի
հայաբնակները ունին։
Թիֆլիսից գալիս են գալիս առաւօտեան
8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկ
յեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ.
Վլադիկաւկասից գալիս են գնում առ
աւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են կէ
սօրեան ժամ 1 և 44 րոպ. և ժ. 5—25 ր

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Іюля 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի ս. № 12. Типографія А.А. Михельсона, Гол. пр. д. № 12.